Հայոց լեզվի և գրականության ուսուցիչների վերապատրաստման դասընթաց

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ <<Արժեքային համակարգի ձևավորումը>> գրականության դասերին

Կատարող՝ Նվարդ Մարկոսյան

Դպրոց՝ 158 հիմնական

Առարկա՝ հայոց լեզու և գրականություն

Կազմակերպություն՝ Երևանի Լեոյի անվան 65 դպրոց ՊՈԱԿ

Խմբի պատասխանատու ՝ Անահիտ Զոհրաբյան

Արժեքային համակարգի ձևավորումը գրականություն առարկայի դասընթացին:

Ներածություն

Արժեքը գիտելիքի, ինֆորմացիայի և սեփական կենսափորձի միահյուսմամբ ձևավորված յուրահատուկ աշխարհընկալումն է, մարդու արժեհամակարգի այբն ու բենը: Նեղ իմաստով՝ արժեքը մարդու համար իրի, առարկայի կամ երևույթի դրական նշանակությունն է, իսկ ավելի ընդգրկուն հայացքն արժեքն ընկալում է իբրև մարդու՝ համամարդկային գաղափարների կրողի ապրումակցման ունակությունների ցուցանիշ:

Մարդկային հասարակության պատմության տարբեր շրջափուլերում արժեհամակարգները ևս տարբերվել են. միջնադարյան ասպետը անպայմանորեն պետք է լիներ ֆիզիկական ուժի կրող, մարտարվեստի վարպետ: Խորհրդային ժամանակաշրջանի հերոսը անձնուրաց գաղափարակիրն էր, իսկ հերոսուհին՝ կոլտնտեսության հաղթաբազուկ աշխատավորուհին: Իսկ մեր օրերում մարդուն ապրելու, ստեղծելու, արարելու համար անհրաժեշտ են, նախ և առաջ, գիտելիքներ՝ գիտական մրցավազքից գոնե ետ չմնալու համար, արժանապատվություն, արդարամտություն, աշխատասիրություն: Վերջին տարիների հայկական իրականությունը հրամայական պահանջ ավելացրեց՝ լինել քաղաքականապես հասուն ու գիտակից, ամեն վայրկյան՝ զգոն ու պաշտպանունակ, հայրենասեր ու աններող՝ դավաճանական ամեն դրսևորման նկատմամբ:

Միաժամանակ մարդը պիտի կարողանա լինել սիրող զավակ, հուսալի ծնող, լավ մասնագետ և դեռ ժամանակ գտնի անձնական կյանքի տնօրինման համար....

Այս ամենի ֆոնին մեծապես կարևորվում է դպրոցական տասներկու տարիների ընթացքում անհատի հոգևոր ու ֆիզիկական ձևավորման մասնագիտական կազմակերպումն ու ճիշտ ուղղորդումը:

Հիմնական արժեք-արժանիքներն արտացոլված են սովորողի կարողունակությունների համատեքստում. 21-րդ դարի քաղաքացին պետք է **կարդա եվ գիտենա** հայ գրականության դասական ստեղծագործությունները և գրականության պատմությունը,

կարողանա տրամաբանորեն ճիշտ ձևակերպել գրավոր և բանավոր խոսքը, գիտականորեն կազմակերպել իր հետագա մասնագիտական գործունեությունը ժամանակակից ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառմամբ, կատարել վերլուծական բնույթի աշխատանքներ, դրսևորել ստեղծագործական մոտեցում,

տիրապետի հայոց լեզվին (գրավոր և բանավոր) և օտար լեզուներով հաղորդակցմանը:

Իմ հետազոտական աշխատանքում կփորձեմ հիմնավորել վերը ասվածը, ցույց տալ, թե ինչքանով և ինչպես եմ կազմակերպում սովորողի արժեհամակարգի ձևավորումը գրականության դասաժամերի ընթացքում և թե ինչ տեսանելի արդյունք է արձանագրվել իմ մանկավարժական պրակտիկայի ընթացքում:

Կրթությունը պետք է լինի շարունակական, այն չի կարող սահմանափակվել միայն դասով, որովհետև դպրոցում ստացած ինֆորմացիան բավական չէ 21-րդ դարի լավ մասնագետ լինելու համար:

Մարդիկ ունեն նաև իրենց կյանքի դպրոցը, որտեղ նրանք անցնում են սեփական դասերը և **սովորում են սովորել**, որովհետև ինչքան ավելի ես սովորում, այդքան հասկանում ես, որ շատ քիչ գիտես:

-«Ես գիտեմ, որ ոչինչ չգիտեմ»,- ասել է Սոկրատեսը,-« Պետք չէ սահմանափակվել: Մենք ամեն րոպե սովորում ենք և միայն այն ժամանակ ենք հասկանում մեր սովորածը, երբ կիրառում ենք կյանքում»: Վերջին տասնամյակներում թե՛ կրթության, և թե՛ առհասարակ կյանքի որակը մեծապես փոփոխվեց մեդիայի համատարած գործածության շնորհիվ:

Մեդիան օգնում է սովորել, լինել զարգացած, տեղեկացված: Մեդիան հեշտացնում է մեր կրթությունը, բայց խելամիտ չէ ամեն ինչ տեսնել մեդիայի մեջ: Երեխային պիտի պարգևենք դժվարությունների հաղթահարման, նպատակին հասնելու, գաղտնիքի բացահայտման, հաղթանակի բերկրանքն զգալու, ինքնուրույն դատելու երջանկությունը: Ուսուցման դասակարգված միջոցներն օգնում են ուսուցչին՝ ուշադրության կենտրոնում պահել սովորողի ուսումնառության ոճը

,ընտրել առաջադրանքների կատարման ռազմավարություն և, ի վերջո, հետադարձ կապ ապահովող գնահատման որևէ եղանակով ամփոփել հանրակրթության և առանձին վերցված ամեն դասաժամի արդյունքների վերահսկման գործընթացը: Բազմազան են դասավանդման մեթոդները՝ ավանդական, կամ նորարարական, հաճախ դասին գործածվում են թե՛ մեկը, թե՛ մյուսը ,ինչն ընդունված է անվանել խառը ուսուցում:

Խառը ուսուցումը մի մեթոդ է, որը համատեղում է ինչպես ավանդական ուսուցումը, այնպես էլ բարձր տեխնոլոգիական առցանց ուսուցումը

Դպրոցական դասընթացում ներգրավված յուրաքանչյուր առարկա ընդգրկում է որոշակի տիրույթ, սակայն գրականություն ուսումնասիրելիս անկարելի է սահմաններ գծել. անսահման են թե ժամանակային, թե թեմատիկ ,և թե այլ շատ ընդգրկումները: Այսօր ուսումնասիրում են Ավետիք Իսահակյանի կամ Հովհաննես Ծիրազի՝ մայրական սիրո անզուգական երգերը, իսկ վաղը՝ Պետրոսի հիվանդ սերը շարքային անբարո մի կնոջ՝ Նենեթի նկատմամբ (Ծ. Ծահնուր, «Նահանջը առանց երգի), մի օր՝ «Հայկ և Բել»՝ բաբելոնյան հեռավոր բախումների արձագանքներ, մի այլ օր՝ Մոսի ու Սարո (Հ. Թումանյան. «Անուշ») նախապաշարմունքների ու տղամարդու կերպարի մասին աղավաղված պատկերացումների զոհեր: Երկու դեպքում էլ տեսնում ենք ինքնասիրության դրսևորումներ, որոնցից մեկում, սակայն, Հայկը, ելնելով հպարտությունից ու տղամարդկային արժանապատվությունից, հաղթահարում է բազում դժվարություններ՝ հեռավորություն, ցուրտ և անկախանում ու հիմնում իր ու մեր բնօրրանը, իսկ մյուսը՝ Մոսին, դարձյալ հպարտությունից ու արժանապատվությունից, կործանում է ու կործանվում:

Օրինակներն անվերջ են, սակայն աշխատանքիս նպատակն է՝ ոչ թե նկարագրել գրական հորիզոնները, այլ այն, թե ինչպես օժանդակել սովորողներին, որ իրենք տեսնեն ու բացահայտեն նույն այդ հորիզոնները. հայտնի խոսք է՝ լսեցի ու իմացա**, կատարեցի ու հասկացա**: Երեխան, դեռահասը, պատանին դպրոցական ուսումնառության ընթացքում պետք է յուրացնի մետաճանաչողական հմտություններ և սովորի սովորել, սովորի կարդալ, ընկալել կարդացածը, հասկանալի բառապաշարով արտահայտի բազմակապ գիտելիք, ցուցաբերի ակադեմիական առաջընթաց: Իսկ ուսուցիչների անելիքը ոչ թե ծեծված ու չարչրկված «դաս պատմել» կոչված գործողությունը պիտի լինի, այլ կրթական

դրական, ողջունելի, բարյացկամ միջավայրի ստեղծումը: Միջավայր ասվածն այս պարագայում մի քանի գումարելիների գումարն է.

- ֆիզիկական միջավայր
- ուսումնական նպատակաուղղված գործընթաց
- որակյալ տեխնոլոգիաներ

Չին մեծ փիլիսոփա Կոնֆուցիոսն ասել է .

«**Երջանկություն** է, երբ քեզ հասկանում են,

Մեծ երջանկություն է, երբ քեզ սիրում են,

սակայն **իրական երջանկությունն** այն է , երբ դու ես սիրում»:

Օգնենք, ուրեմն, մեր սաներին՝ գտնել իրական երջանկություն գրականության նկատմամբ սիրո տեսքով:

Սեփական փորձի ներկայացում

Դասավանդում եմ միջին և բարձր դասարաններում, ուստի զերծ կմնամ ավելի վաղ տարիքի երեխաների հետ տարվող աշխատանքների քննարկումից:

Առաջին և պարտադիր քննարկման ենթակա թեմաներից մեկը «ընկեր, դասընկեր» հասկացողություններին է վերաբերում: Լրացուցիչ ընթերցված «Իմ ընկեր Նեսոն» պատմվածքը /Հ. Թումանյան/ հրաշալի նյութ է պատանիների թիրախ խմբում զրույց, խմբային քննարկում կամ, ըստ իրավիճակի, այլ աշխատանք կազմակերպելու համար.

- հնարավորություն է տրվում **համեմատելու** մերօրյա նույնիսկ ամենաանապահով ընտանիքների երեխաների կենցաղն ու սովորելու իրավունքը փոքրիկ Հովհաննեսի, Նեսոյի և նրանց համագյուղացի երեխաների կյանքի և, մանավանդ, ուսման հնարավորության հետ.

« Ոչ ուսումնարան կար, ոչ դաս, ոչ դաստիարակություն. ազատ էինք միանգամայն ու խաղում էինք, ի՞նչքան էինք խաղում: Ու ո՞նց էինք իրար սիրում,

ո՞նց էինք իրար սովորել: Սոված ժամանակներս էլ՝ վազում էինք հացի տաշտիցը մի կտոր հաց առնում, պանրի կարասիցը մի կտոր պանիր ու էլ ետ շտապում իրար մոտ: Իրիկուններն էլ հավաքվում էինք, ծիծաղ բաներ ասում կամ հեքիաթ պատմում:»

- **պատկերացում** է տրվում 19-րդ դարի իրողությունների մասին.

«Էնպես պատահեց, որ մեր գյուղում ուսումնարան բաց արին: Ինձ ուսումնարան տվին, ինձ հետ էլ մի քսան-երեսուն երեխա: Ամեն մի երեխի համար տարեկան երեք ռուբլի վարձ էին ուզում. էս պատճառով էլ գյուղի երեխաներից շատերը, որոնց ծնողները չէին կարող տարեկան երեք ռուբլի տան, մնացին դուրսը: Դուրսը մնացին և իմ խաղընկերների մեծ մասը, նրանց հետ և Նեսոն:»

- **հստակ ցուցադրվում է** անազնվության ամոթալի էությունը և դրան հակադրվող, սպասվող զայրույթի կամ պատասխան ագրեսիայի փոխարեն, ցավի ու ափսոսանքի դրսևորումը.

« Ես պարզ նկատեցի, որ նա իմ դանակը տակով արավ, վերջն էլ ուրիշները տեսել էին ձեռին: Եվ ճանապարհ ընկանք, սրտումս մի ծանր վիշտ կար, որ ոչ թե դանակս եմ կորցնում, այլ մի ուրիշ **շատ թանկագին բան**, որ Նեսոյի համար անհասկանալի էր....»

-Իսկ ի՞նչն էր այդ թանկագին բանը:

Այս հարցը տալուց հետո ուսուցիչը կարող է հարմար տեղավորվել լսելու համար, որովհետև , որպես կանոն, սկիզբ է առնում աշխույժ բանավեճ: Նույնիսկ զվարճալի է, որովհետև ստեղծվում է տպավորություն, որ յուրաքանչյուրից ինչ-որ բան են գողացել: Ճիշտ ժամանակն է՝ **ստեղծելու դիրքորոշում**, գտնելու սեփական վերաբերմունք և պատասխան «պատժե՞լ, վրեժխնդի՞ր լինել, ներե՞լ, թե՞ աղոթել» հարցին:

- ինձ համար ամենակարևոր տողերը՝ «Նա էլ **եթե** ուսում առներ, կրթվեր, ապահով լիներ՝ լավ մարդ կլիներ, **գուցե** ինձանից էլ շատ ավելի լավը...»

«ԵԹԵ...., ԳՈՒՑԵ.... »

- Աննկարագրելի արդյունավետ հակադրություն է (կամ համադրություն, որովհետև մեկն առանց մյուսի այլ շրջանակ է ներկայացնում) կյանքի չգրված օրենքները դիտարկելիս: Համարյա բոլոր երեխաներն այս բազմակետները լրացնելու նյութ ունեն կամ գտնում են ընթացքում: Եղել են դեպքեր, երբ մի երեխա խոստովանել է, որ եթե չլիներ այս կամ այն դեպքը, գործոնը, ապա ինքը կուսումնասիրեր, օրինակ, կենսաբանություն, իսկ մյուսն այդ պահին հանկարծ բացականչում է՝ «Վաայ, ես էլ եմ նույն պատճառով հիասթափված»: Այստեղ ես կարևորում եմ երկրորդ երեխայի ակամա ինքնավերլուծությունը. եթե ուշադրություն դարձրել եք՝ հաճախ ինքներս մեզ հասկանում ենք ուրիշի մասին խոսելիս, քանի որ երբ միտքդ զբաղված է ուրիշի խնդիրներով, դու կարծես հեռանում ես ինքդ քեզանից և հեռվից նկատում այն, ինչը չէր երևում մոտիկից. սա, կարծեմ, ֆիզիկայի օրենք է: Կրկնում և պնդում եմ, որ ուսուցչի դերը,հատկապես կշռադատման, ամփոփման փուլերում, կայանում է նրանում, որ սովորողին հասցնի ինքնավերլուծության**, սեփական կենսահայեցողության կառուցման կամ ստեղծման**, օգնի կողմնորոշվել թե՛ նյութի ընկալման, թե՛ գիտելիքի արտահայտման ձևերի բազմազանության մեջ: Սովորողի՝ դասին ներգրավվածության երաշխիք փաստերից կարևոր են՝
- ընկալում, ըմբռնում, փաստերի ինքնուրույն համակարգում
- գրագետ, սահուն արտահայտվելու հմտություն
- Սեփական հայեցակարգի պրիզմայով անցկացված կայուն գիտելիքների համակարգում:

Բենջամին Բլումի տաքսոնոմիայի հայեցակարգի տեսանկյունից դիտարկենք ուսուցչի և սովորողի գործունեության շրջանակները 11-րդ դասարանում Ավետիք Իսահակյանի «Հայրենի հողը» բալլադն ուսուցանելիս: Դիպաշարի ուսումնասիրմանը զուգահեռ՝ հանձնարարում եմ վերհիշել նմանատիպ տեսարաններ, որոնք պատկերվել են այլ ստեղծագործություններում, օրինակ՝

Անհուն նախանձի կրքով տոչորուն՝

Մի օր խնջույքում արքայական տան,

Մի զորականի՝ անհայտ, անանուն,
Ժպտաց սիրալիր, դրվատեց նըրան:

Եվ նա փոխարեն զորավարին մեծ՝
Տեղ տվեց նըրան առընթեր գահի,
Հյուրերին բոլոր՝ զարմանք պատճառեց
Այնքան ապերախտ վարմունքն արքայի

Հատվածն ընթերցելիս վերհիշում ենք հայ գրականության հեթանոսական շարժման նկարագիրը, հատկապես՝ «Ասպետական դարերու, «մեծազոր կենցաղի» փառաբանությունը.

-Եվ կոչունքի կը բազմի Բագրատունին վտարանդի
Աջ կողմը ճիշտ Բակուրին՝ որ իր կարգին կը նըստի
Գահի մը վրա՝ որուն լայն թիկնատեղն է քանդակված
Բագոսը՝ եզ մ'որթերով պըսակելու ըզբաղած:
Սեղանի շուրջը **արդեն Մեծամեծերն հայկազուն**
Դեմ հանդիման բազմեր են, բայց ո՛չ իրենց մեծանուն
Աստիճանին համեմատ, այլ սուրերու մեծության;
Հոն են ճորտերը Սյունյաց գավառներուն երկտասան,
Լերան ազատ զավակներ, միշտ զրահի մեջ կուրծքերնին՝
Որոնք հըզոր կումբի պես ջահերու տակ կը փայլին:
Հոն կան նաև բըդեշխներ, ազատանին քաջարի՝
Որ կը պատմեն թե ի՛նչպես կ'որսան վարազը վայրի: /Դ. Վարուժան «Հարճը» /

Ավետիք Իսահակյանը «Հայրենի հողը» բալլադում չի նշում, թե ո՛ր կոնկրետ երկրում են տեղի ունենում իրադարձությունները, ուստի, հաշվի առնելով նյութի համամարդկային առանցքը՝ հայրենասիրությունը, այն վերլուծելիս նկատի ենք ունենում մեզ՝ հայերիս: Հեթանոսական շրջանի դյուցազուններին ու նրանց առնականությունն արտացոլող պատկերների հակադրումը մերօրյա արատներին՝ նախանձ, քծնանք, դիտավորյալ նսեմացում, իհարկե, չի նշանակում անցյալի իդեալականացում կամ պատմության վաղնջական ժամանակները վերադառնալու կոչ. սա միայն գեղարվեստական պայմանականություն է, որով բանաստեղծը մարմին է տալիս ուժեղ, առնական, կատարյալ մարդու, ազատ,ներդաշնակ ու գեղեցիկ աշխարհի մասին իր իդեալներին:

Ավագ դպրոցի սաները հասու են այնպիսի լրջագույն հարցերի քննարկմանը, ինչպիսիք են հեթանոսության և քրիստոնեության գաղափարախոսությունը (Դանիել Վարուժան, «Հարճը», Լևոն Շանթ, «Հին աստվածներ»):Կիրառում եմ **«սրտի քարտեզագրում» մեթոդը**՝ ուշադրություն դարձնելով գույների ընտրության պարզաբանմանը:

Համեմատության մեջ ընդգծվում է բալլադում արքայի փոքրոգի պահվածքը հզոր զորավարի հանդեպ, որը դրսևորվում է սեղանի շուրջը հյուրերի զբաղեցրած տեղերով. արքան դիտավորյալ, զորավարին նսեմացնելու անթաքույց նպատակով նրան տեղ է հատկացնում իրենից ու կենտրոնից հեռու՝ դռան մոտ, ինչով խիստ վիրավորում է փառավոր զորականին: Դասավանդման առաջին ժամին այս հատվածն արդեն իսկ բավական նյութ է պարունակում **մտորելու**, նախկինում ստացած տեղեկությունները **համադրելու** համար:

Եվ այսպես, Բ. Բլումի աստիճանակարգի համաձայն, հարցերի միջոցով սովորողին ուղղորդում ենք դեպի ինքնուրույն եզրահանգումներ.

Գիտելիք, մտապահում

-կարո՞ղ եք ասել, թե ինչու հակադրվեցին արքան և զորավարը

Ըմբռնում

-ի՞նչ բառերով կարտահայտես զորականի վրդովմունքը

Կիրառում. հարցերի միջոցով ուղղորդում եմ սովորողներին՝ կիրառել այլ ստեղծագործություններից ունեցած նմանատիպ տեղեկությունները կամ գիտելիքները

-Կարո՞ղ եք հիշել, թե որ ստեղծագործություններում ենք ականատես եղել վաղ ժամանակների հայ իրականության մեջ խնջույքների ծիսակարգին, մասնավորապես՝ սեղանի շուրջը տեղավորվելու հիմունքներին:

-Ինչպե՞ս է մեկնաբանվում այդ հարցը Դանիել Վարուժանի «Հարճը» պոեմում:

Վերլուծում

-Կարո՞ղ ես ձևակերպել քո կարծիքը ստեղծված իրավիճակի մասին:

Համադրում.

-Ենթադրենք՝ դու ես «Հայրենի հողի » արքան, հասկացել ես սխալդ և փորձում ես փրկել քո երկիրը: Ի՞նչ քայլեր կանես, կամ ի՞նչ վերաբերմունք կդրսևորես:

Գնահատում

-Նշված փաստերից ո՞րն ես համարում առավել կարևոր. հիմնավորիր, խնդրեմ:

Պատասխաններն ամփոփելիս խնդրում եմ **արժևորել** հեթանոսական հրաշալի սովորույթը, երբ սեղանի շուրջ տեղավորվում են ըստ սուրերի մեծության և մատուցված միսը իր դանակով առաջինը կտրում է որսացող դյուցազնը, այլ ոչ թե խոհարարը կամ տանտերը.

Եթե ժամանակի սղությունը չխանգարի, այստեղ տեղին է հիշատակել նաև Խիկար Իմաստունի պատմություններից մեկը՝ «Երեք խրատ», որի շուրջ մտորումները վստահաբար արդյունք կտան և մեծապես կնպաստեն սին մեծամտության

24200349.webp 24200349.webp

նահանջին:

Այժմ ամենակարևորի՝ «Հայրենի հողը» ստեղծագործության հիմնական գաղափարի մասին. դարերի ընթացքում հայոց պատմության մեջ շատ են եղել ճիշտ ու սխալ արարքներ, բայց մի բան հաստատ փաստ է՝ երբ հայրենի հողին վտանգ է սպառնում, ազգը պետք է ամեն բան մի կողմ դնի և միաբանվի մի գաղափարի շուրջ՝ **փրկել ու պաշտպանել հայրենիքը...**

-«Մայրենի տաղով, հայրենի հողով
Կերթանք նրա մոտ մեր գուսանն ու ես,-
Ձայնում է ուժով մի ծեր շինական,-
Կբերենք նրան, նա չի լքի մեզ»:

Այս քառատողի վերաբերյալ առաջարկում **եմ համադրման** տարր պարունակող աշխատանք՝ մեկնաբանել և մանրամասնել ծեր շինականի որոշման շարժառիթը և, եթե կարող են, **ավելացնել սեփական լուծում**: Բացի այդ, հառնում է մի շատ կարևոր հարց.հայ ազգն իր գոյության ողջ ընթացքում բազմիցս ապացուցել է, որ իր զավակները քաջարի ու զորեղ մարտիկներ են, անձնուրաց՝ հայրենիքի պաշտպանության և նահատակված հայենակիցների համար վրեժխնդրության հարցում (այստեղ տեղին է ևս մեկ անգամ հիշեցնել Ավետիք Իսահակյանի՝ «Նեմեսիս»-ում ծավալած գործունեության մասին:) Եվ այսպես, հարց.

-Արդյո՞ք կարևոր է առաջնորդի գործոնը, թե՞ քաջ զինվորներն այլևս ղեկավարի կարիք չունեն:

- Եթե առաջնորդ կամ ղեկավար (զորավար կամ հրամանատար) պետք է, ապա.....(մտագրոհով թվարկում են առաջնորդի կամ հրամանատարի անձնական հատկանիշները)

Եթե զինվորները դյուցազուններ են և հրամանատարի կարիք չկա, ապա..... (տրվում է հի

մնավորում)

Լրացնում են մտագրոհով, իսկ եթե կարծիքները հստակ սահմանազատված են, օգտագործում ենք «**անկյուններ**» կամ «**գրական դատ**» մեթոդներից մեկը: Ժամանակի սղության դեպքում դիմում եմ զինղեկին՝ խնդրելով կատարել անհրաժեշտ լրացումներ կա՛մ գրականության, կա՛մ ՆԶՊ դասաժամերին:

-«Եվ ժողովուրդը ուղի է դնում

Իր հին գուսանին և ծեր գեղջուկին.

-Ողջույններ տարեք, մեր սերը անհուն,

Նա չի մոռանա իր ժողովրդին»:

Գեղջուկ, գուսան, ժողովուրդ...

Հիրավի, հոգի ջերմացնող բառեր, որոնք ենթագիտակցության մեջ արթնացնում են ազգային արժեքներ.մտապատկերում հառնում են հավաքական հիշողության պատկերներ. փոքրիկ սազով ու անպաճույճ կատարումով հոգին տակնուվրա անող աշուղ-գուսաններ, որոնց շուրջը անթարթ ունկնդիրները՝ կորամեջք, բայց իմաստնացած ծերեր, երիտասարդներ, երաժշտության ելևէջների տակ ամփոփում ու իմաստավորում են ապրած կյանքը: Տեղին է անդրադառնալ Հովհաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի անուղղակի կերպար

աշուղին, որը, չնայած պոեմում չարի գործիք դառնալուն, միևնույն է, մնում է իբրև եզակի անձնավորություն, որի առաջ բացվում են փակ դռները.
« Ուր ահեղ կըռվով չի մտնիլ արքան,
Ղոնաղ է աշուղն իրեն սազի հետ»: «Թմկաբերդի առումը»
Վերադառնանք «Հայրենի հողը» ստեղծագործության ուսումնասիրմանը.

Գնացին նրանք, սահմանը չանցած՝
Ծինականն արտից առավ **մի բուռ հող,**
Լցրեց քսակը, և արագընթաց՝
Հասան իշխանի ապարանքը ճոխ»:

-« Ինչպե՞ս մայրենի խոսքերով անուշ
Կանչում են նրան, կանչում կարոտած.
Եվ վաղուց մեռած մոր ձայնը քնքուշ
Անհուն քաղցրությամբ լսում է հանկարծ:

Եվ թաց աչքերը սրբում է ափով.
Սակայն ծերունին քայլերով ամուր
Մոտեցավ, դրեց քսակը հողով
Իշխանի առաջ և կանգնեց անդորր:

Իշխանը սուզված նայում է անթարթ,
Անհագ հայացքով նայում է հողին,
Հողը խոսում է նըրա սրտի հետ,
Եվ սիրտը նըրա խոսում է հողին:

«Հայրենի հողը քաշում է իրան,

Ինչքա՞ն ուժով է, ի՞նչ անպարտելի.

Եվ ինչպե՞ս քաղցրը հուշում է նրան

Վառ մանկությունը՝ երազներով լի:

Այդ հողն է նրան ծընել ու սընել,

Իր մայրն ու հայրը այդ հողն են դառել,

Եվ հայրենիքն է, ժողովուրդն անմեռ,

Եվ նախնիքները, որ հող են դառել:

Լսում է խորհին այդ անհուն ձայնին,

Մայր ժողովրդի կոչին դարավոր,

Օ՛, ինչքա՞ն ուժով քաշում է նրրան

Հայրենի հողի խորհուրդը հզոր:»

Հողն է ծնել ու սնել, հողը հիշեցնում է վառ մանկությունը, հողը մեր հող դարձած նախնիներն են. հիանալի մեթոդ կա այս անձնավորումն ընկալելու համար՝ **քառաբաժան:** Տրվում է հինգ րոպե՝ լրացնելու հետևյալ բովանդակությամբ **հարցաթերթիկը**.

- Ի՞նչ էիք տեսնում տողերը կարդալիս
- Ի՞նչ էիք զգում՝ հույզեր, զգացմունքներ
- Ինչպե՞ս կվերնագրես հատվածը:
- Հորինի՛ր նոր վերնագիր: Ի՞նչ գույն ունի քո տրամադրությունն այս պահին :

Շարունակում ենք ընթերցել «Հայրենի հողը» պոեմը.

«Եվ կարկառում է ձեռները դողդոջ,

Քսակը փոքրիկ վերցնում երկյուղած,

Զգում է այնպես՝ թե **աշխարհի ողջ**

Գանձերը ունի ափի մեջ բռնած:

Աչքերը լցված **սրտի արցունքով**՝

Խոնարհում է հեզ գլուխն արքենի,

Եվ երեք անգամ անհուն կարոտով

Համբուրում է նա հողը հայրենի:

Արժեքներից մեծագույնը՝ հայրենասիրության զգացումը դաստիարակելու համար գրականության դասընթացը բազմաթիվ հիանալի հնարավորություններ է ընձեռում: Վերոհիշյալ երկու քառատողերը մեկնաբանելու համար կարելի է հատկացնել ամբողջ մի դասաժամ:

Հայրենասիրությունը մեծագույն արժեք է, այն հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամու մոտ: Հիշենք Նադիր Շահի հարցը Թմկա կարճամիտ տիրուհուն.

«Ու **լի դառնությամբ** հարցընում է նա

Դալուկ, մարմարիոն Թըմկա տիրուհուն.

— Պատասխան տո՛ւր ինձ, մատնիչ սևաչյա,

Մի՞թե Թաթուլը քաջ չէր ու սիրուն…» /Հովհաննես Թումանյան, «Թմկաբերդի առումը»/

Դառնացած է հաղթողը…

Թո՛ղ որ ասացվածք կա, թե հաղթողներին չեն դատում, բայց ամենամեծ դատավորը **խիղճն** է, սովորողներին պետք է հասու դարձնել այն մտքին, որ խղճի հետ անհնար է գործարքի մեջ մտնել: Նադիրը, բացի ոսոխ լինելուց, տղամարդ էր, քաջարի մարտիկ և չի թաքցնում ափսոսանքը մեկ այլ քաջի, թեկուզ հակառակորդի անփառունակ մահվան վերաբերյալ, այն էլ ոչ ռազմի դաշտում, այլ անզեն ու անգիտակից վիճակում, ագահ կնոջ միջոցով:

Ինչպե՞ս չնկատել «լի դառնությամբ» բառերում ամփոփված հարգանքը արժանավոր հակառակորդի նկատմամբ: Վերջին տարիների դառն իրականությունը ցույց տվեց, որ Հայաստանի պետականությանը սպառնացող գործոնների թվում եղել են նաև պետական հանցագործներ ու դավաճաններ: Մի՞թե սրանք վատթար չեն իրական թշնամուց: Որքան կարևոր է, որ ապագա զինծառայողը դեռ դպրոցում կարողանա տարբերակել «օտար, թշնամի, դավաճան, դաշնակից» ու նման այլ հասկացությունները, կարողանա ճանաչել դավաճանության դեմքը, պատրաստ լինի զինվորական ծառայության դժվարություններին դիմակայել ոգու ուժով՝ հայրենի հողի ձգողականությամբ ամրացած:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կրթությունը գիտելիքի, արժեհամակարգի, էթիկայի, ավանդույթների և սովորությունների ձեռքբերումն է: Կիրթ կարելի է համարել այն մարդուն, ով ոչ միայն տեղեկացված է, այլև կարող է դիտարկել փաստերն ու ինքն իրեն տարբեր տեսանկյուններից, ունի իր կարծիքը: Կիրթ մարդու, բարձր արժեհամակարգի կրողի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է: Այն մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Դաստիարակչական աշխատանքների կարևոր պայմաններից են ուսուցչի վարպետությունը, մտահորիզոնը, լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ: Ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով պիտի կարողանա հասնել աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական կատարելությանը,արժանապատվության, սեփական «Ես»-ի արժեքի գիտակցմանը և, ի վերջո, դեռահասի վարքի, արարքների, իրավունքների գնահատականին, անձի ինքնագնահատմանը:

Կրթության վերջնարդյունքներից կարևորագույնը **ազգային արժանապատվության**, սեփական ազգի արժանիքների, վաստակի, իրավունքների գիտակցումն է, ինքնահարգանքը՝ որպես ազգի ներկայացուցիչ: Ոչ պակաս արդյունքներ են **արդարամտությունը**, այլոց ճշմարիտ, արդարացի **գնահատումը**: Եթե արժանապատվությունը անձի հարգանքն է իր հանդեպ, ապա արդարամտությունը **հարգանքն է ուրիշների հանդեպ**: Այսպիսով արդարամտությունը ոչ միայն անդրադառնում է մեր սեփական ինքնագնահատականի վրա, այլ նաև ազդում է դրա վրա: Արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են **համոզմունքների և կարողությունների**:

Օգտագործված գրականություն, ծանոթագրություն

Ա. Հ. Սարգսյան, Վ. Միրզոյան, Մշակութաբանություն: ՈՒս. ձեռնարկ.-Երևան: Տնտեսագետ,2007.- էջ 28-38

Խիկար Իմաստուն (Ախիկար, Աքաիկարոս, Խիկար), ապրել է մ.թ.ա. 5-րդ դարում, Ասորեստանի Սենեքերիմ թագավորի ժամանակ, եղել նրա ատենադպիրը:

Ուսուցման արդյունավետ հնարներ / Ս. Խաչատրյան.- Եր.:

Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020.-